

338.98/421
U-38

1829
8.38(42)
38

Ա. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱԿԸ

ИНСТИТУТ
ПОСОВЕЩЕНИЙ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲԵՎԱՆ—1929

10 5 APR 2013

32.197



59954-66 րատ. № 1150

ՊԵՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեպ. № 2916(բ) Պատվ. № 1298 Տիր. 5000

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Զարգացման սեմալը, ինդուստրիալիզացիան, համայնացման պրոցեսները, աշխատանքը յեվ վորակային ցուցանիշները հնգամյա պլանում)

Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցման շըրանը Ենգելսը բնորոշել է մի արտահայտություն՝ ցատկում անհրաժեշտությունից դեպի ազատություն։ Ըրոք, ի՞նչպես է առաջ ընթանում տնտեսական կյանքը, ի՞նչպես են զարգանում արտադրողական ուժերը, ինչպես է կարգավորվում և բաշխվում հասարակական շխատանքն ապրանքային կապիտալիստական հասարակարգում։ Շուկայի գնների տատանումներն արեքից կամ արտադրության գնից ցած կամ վերև— հա այն մեխանիզմը, վորի միջոցով տեղի յե ունենում կապիտալների և սրա հետևանքով աշխատանքի եղավորությունն (перелив) արտադրության մի ուղից դեպի մյուսը, արտադրական ուժերի նոր դավորումը, աշխատանքի նոր վերաբաշխումը։ Այլ ուղով կապիտալիստական հասարակարգի ագենտները յինթակա յեն շուկային, տարերքին, արտադրողների կամքից և ցանկություններից անկախ և որեկիվորեն գործող, վորպես անհրաժեշտություն՝ արժեի որենքին։

Ակներև ճշմարտություն է, վոր կապիտալիստական տնտեսակարգը խոշոր պրոգրեսսիվ քայլեր ֆեոսդալական տնտեսական կարգերի համեմատությամբ։ ակալն ճիշտ է նաև այն, վոր շնորհիվ իրենց առանձ-

նահատուկ ստրուկտուրայի, կապիտալիստական կարգացման ասպարեղում: Հնգամյա պլանի գոյուգերը, մանավանդ վորոշ ետապներում և մասնավորապես չորսում, ինչպես և նրա իրականացումը հսկայական պես իմպերիալիզմի շրջանում արգելք են հանդիսանում և «վերջին ճակատամարտի» պատրաստականում արտադրական ուժերի արագ զարգացմանն ություն կենդանի միջազգային պրոլետարիատին, ծաղկմանը: Ենորհիվ կապիտալիստական արտադրողական նաե կցրի բուրժուալիզի կողմից դարերի կան հարաբերութունների՝ հասարակական աշխատանքացքում տարածած և համաշխարհային բանվոր քի զգալի մասը վատնվում և վոշ արտադրողական աշխարհի զգալի շերտերում դեռևս բուն դրած այն կերպով (մրցում, ճգնաժամեր, շրջանառության ծախսայնությունը, ըստ վորի հասարակական սեփականներ և այլն), վորը և պայմանավորում և արտադրությունը, կամ սեփականության սոցիալիստական դական ուժերի, տնտեսական մակարդակի զարգացման անհնարին կդարձնի տնտեսական կյանքի վերելքը: ման ավելի դանդաղ քափ (սեմպ):

Մեր հնգամյակը, ամենահեռավոր հայացքից հաշվարկական և Ֆերկորդ Խնտերնացիոնալի իդեոլոգիաներում և յերկու կողմ, վորոնք աննախընթաց կերի կողմից, իսկ տրադիցիայի ուժը խոշոր պատշտեսնված՝ նախախորհրդային վարեն հասարակակական ուժ և, վորը կասեցնում և, վորպես սուբյեկտների համար: Մարդկային պատմության մեջ առաջինի գործոն, բանվորական մասսաների հեղափոխականացումն և, վոր հասարակությունը նախագծում և կան գրոհը կապիտալիստական կարգերի դեմ: տնտեսական կյանքի վերելքը վոշ թե «անհրաժեշտության» թեղադրանքով—վերը բերած իմաստով, վոշ կանդիսանում և խորհրդային սոցիալիստական կարանկա իր կամքից և ցանկություններից, այլ ընդերի կոնկրետ «ազիտպրոպը»: Հնգամյակում նախահակառակը՝ յերկեսու ունենալով հասարակության, մոտաված մեր զարգացման տեմպերը, մեր վերելքի լիոնավոր մասսաների շահերն ու ցանկություններն իրենց չտեսնված թափ և նույնիսկ կապիտալիստական կոնդեսացիայի յենթարկելով մասսաների ազատ կամայնառաջավոր յերկրների համար: Յեթե վերցնենք մեր հասարակակարգի դեկավարող ավանգարդը, հիմնափելի «մաքուր» կապիտալիստական յերկրը՝ Ամերլով գիտության վերջին տվյալների վրա, կանխորիկան («մաքուր» այն իմաստով, վոր ամերիկյան շում և և կարգավորում հասարակական-արտադրական կապիտալիզմը չժառանգեց յեվրոպական կապիտալիսաշխատանքը զանազան բնագավառներում հինգ տասական յերկրների պես ֆեոդալական-կալվածատիրական համար, հինգ տարի առաջ: Մեր հնգամյակի «մոտական կարգերից բազմաթիվ միացորդներ, վորոնք զգաղը» ինքնին շոշափիլի արտահայտությունն և սոցիալիզեր խաղացին այդ յերկրների զարգացման թափը լիզմի կառուցման: Նրա նշանակությունը շատ ավելանդողեցնելու ասպարեղում), կտեսնենք, վոր Ամերիմեծ և, քան թվում և առաջին հայացքից: Նա խոշ

ործոն և համաշխարհային հեղափոխական պրոցեսի

կողմից և շարունակ հրահրվում և

Մեր հնգամյա պլանն իր մի ուրիշ կողմով և

կայի զարգացման ամենաբարձր տեմպը հավասար
 յեղել 7—10 տոկոսի, իսկ միջինը—4,6 տոկ.։ Մինչդեռ
 մեր հնգամյա պլանը նախատեսում է մեր վերելքի
 թափը—ծառեկան 20—22 տոկոս։ Այս հանգամանք
 նույնպես խոշոր պատմական ապացույց է մեր տնտե-
 սական սխտեմի առաջնություն, նրա պրոգրեսի-
 բնություն՝ կապիտալիստական սխտեմի հետ համեմ-
 տած։ Հայտնի է, վոր միջանի տարի առաջ, վեր-
 կանգնման շրջանում, նույնիսկ մեր ժամույլում ա-
 կարծիքն էր հայտնվում, վոր վերակառուցման շրջա-
 կհայտնաբերի զարգացման անհամեմատ ավելի դա-
 դաղ տեմպ, քան այսպես կոչված վերականգնման շր-
 ջանը։ Խոսվում էր այն մասին, վոր վերակառուցման
 շրջանում կունենանք տարեցտարի պակասող թա-
 որինակ՝ 10—5 տոկ. և այլն։ Նման նախագծումներ
 կամ պրոգնոզը նույնպես ապացույց է այն բանի, վ-
 մեր տնտեսագետները թերագնահատում են այն պ-
 տենցիալ եներգիան, վոր կա մեր մասսաների մե-
 վորի ռացիոնալ և եֆֆեկտիվ իրացումը միայն խո-
 հրդային տնտեսական սխտեմի և ապահովում։ Սակայն
 մեր զարգացման թափի այս միջին նշանացույցը
 20—22 տոկ. դեռևս լրիվ պատկերացումը չի տալի-
 այն ցատկունների մասին, վորոնք տեղի յեն ունենա-
 լու արտադրություն զանազան ճյուղերում։ Այդ հարց
 կքննենք քիչ հետո։ Անհրաժեշտ է այստեղ շեշտել, վ-
 զարգացման նման թափը միանգամայն համապատաս-
 խանում է 15-րդ համաշխարհային դիրեկտիվին, այն
 զարգացման այնպիսի թափի սահմանել, վորն ապահ-
 վի պատմական միևնույն ժամանակաշրջանում մեր յե-
 կրի տեխնիկա-տնտեսական մակարդակի հասնելը

նցնելը ժամանակակից կապիտալիստական յերկրնե-
 ի համապատասխան մակարդակից։ Արտասահմանյան
 եղին մամուլը, սոցալ-դեմոկրատական տնտեսագետ-
 ները, ինչպես նաև մեր սկիպտիկները ծաղրի յեն-
 արկեցին այս լողունը, ինչպես, տեխնիկայի և
 ուլտրապես հետաճիաց, արորի և չութի յերկիրը
 րազում է և հանգգնում հասնել և անցնել կապի-
 ալիստական յերկրների տեխնիկական մակարդակին.
 ա բալլևերկյան հերթական բլեֆ է, —խոշոր աչքեր
 արքած բացականչում էյին կապիտալիզմի յերդվալ
 ավատարմատարները։ Մեր հնգամյակը հերթական
 լողումը կմոցնի նման «հեռատեսների» հոռետես հա-
 զիքների մեջ։ Անցնենք «բստ եյուլյան»։ Համաձայն
 նկ. Լ. Եվկենտովի տվյալների *), ներկայումս Խոր-
 րդային Միություն տեխնիկա-տնտեսական մակար-
 ակը (իւ չճռական ասպարեզներում) վողջ ժողովրդա-
 ան տնտեսության մասշտաբով գտնվում է այն կե-
 ում, վորն ապրել է Ամերիկան 80-ական թվական-
 րում, ալ խոսքով՝ մեկն յես եկն մնում Ամերիկայի
 ամանակակից մակարդակից 50 արով։ Ըստ մեր հըն-
 ամյա պլանի, այս կես դարու ճանապարհը մենք
 յետք է կարենք 5—7 տարում։ Յիվրոպական կապի-
 ալիստական յերկրներից վոմանց անց կկենանք։ Հա-
 աշխարհային տնտեսության ասպարիզում մեր տեսա-
 արար կշիռը խոշոր չափով կբարձրանա։ Այսպես՝ հըն-
 ամյակի վերջում չուգունի արտադրություն ասպա-
 իզում Խորհրդային Միությունը, վորը հիմա բռնում

*) Пятилетний план народного хозяйства в све-
 е развития мирового хозяйства. „Большевик“ № 8.

և վեցերորդ տեղը, Լտեղափոխվի չերրորդ տեղը (Գերմանիայից և Միացյալ Նահանգներից հետո), քարածխի ասպարիզում հինգերորդ տեղից՝ չորրորդը (Միացյալ Նահանգներ, Անգլիա, Գերմանիա և ԽՍՀՄ)։ Հնարավոր է արդյոք պատմության մեջ հտեանված նման առաջխաղացում։ Այո, հնարավոր է, վորովհետև մենք մեր տնտեսական վազքը կատարում ենք, լեւակետ ունենալով ժամանակակից գիտութւյան և տեխնիկայի մակարդակը։ Մեր հետազոտութւյունը, արտադրութւյան վորոշ ճյուղերի գրեթե բացակայութւյունը մեր յերկրում, դառնում է մեզ համար պլյուս, վորովհետև մենք չենք ունեցել անցյալներում արված խոշոր կապիտալ ներդրումներ, վորոնք «կաշկանդելին» մեր ձեռքերը և, մյուս կողմից, մեր տնտեսական սխտեմը կապիտալիստական սխտեմի նման իր մասնավոր սեփականությամբ չի դանդաղեցնում արտադրողական ուժերի զարգացման թափը։ Այդպիսի պայմաններում և մասնավորապես շնորհիվ մեր տնտեսական սխտեմի առավելութւյուններին՝ առաջիկա հնգամյակում մեր տեմպը միջին հաշվով գերազանցելու չե ժամանակակից կապիտալիստական յերկրների տեմպից 4—5 անգամ, վորի շնորհիվ մենք, լարելով միլիոնների եներգիան, հաղթահարելով դժվարութւյունները, 50 տարվա ճանապարհը կկորենք մոտավորապես մի հնգամյակում։ Վորպիսի հոյակապ պերսպեկտիվ, իրոք վոր հնգամյա պլանի իրագործումն ամենացայտուն կերպով ցուցադրելու չե սոցիալիզմի տնտեսական ձևերի անասելի առաջնութւյունը կապիտալիզմի տնտեսական ձևերի համեմատությամբ, մեծ չափով կանխորոշելու չե «ՌՎ ՌՆ» պրորբնի լուծումը։

* * *

Մեր յերկիրը դեռևս ապրում է ու զարգանում կապիտալիստական շրջապատում։ Ակներև ճշմարտութւյուն է և փաստերի մի շարան կարելի չե բերել՝ հաստատելու այն իրողութւյունը, վոր մեզ շրջապատող կապիտալիստական, իմպերիալիստական յերկրները շարունակ դավեր են նյութում մեր դեմ, և վոր կապիտալիստական ու սոցիալիստական սխտեմների կոնֆլիկտը մեր զարգացման վորոշ փուլում գրեթե անխուսափելի չե։

Մեր յերկիրը, բանվոր դասակարգի զիկտատուրան ճակատագրական սխալ կաներ, չեթե մի բոպե անգամ աչքաթող աներ այդ բաղխման հեռանկարը և չեթե լուրջ քայլեր չաներ մեր յերկրի ազմունակութւյունը հասցնելու ժամանակակից իմպերիալիստական յերկրների ազմատնտեսական և տեխնիկական մակարդակին։ Իսկ սրան հասնելու միակ միջոցը՝ մեր զինված ուժերին ինդուստրիալ բազա սեղծելն է, յերկրի ինդուստրիալիզացիան է։

Մյուս կողմից, մեր յերկրի առաջխաղացումը սոցիալիստական ուղիով, 25 միլիոնանոց գյուղական մանր ու ցիրուցան տնտեսութւյունների սոցիալիստական վերակառուցումը, գոյութւյուն ունեցող դժվարութւյունների արմատական լիկվիդացիան, վերջապես մեր յերկրի՝ արտասահմանյան կախումին աստիճանաբար վերջ տալու անհրաժեշտութւյունը հարց են դնում մեր առաջ—գարկ տալու սոցիալիզմի բազային—մեր ինդուստրիալին, մեր ծանր արդյունաբերութւյանը։

Յեւակետ ունենալով այս նկատառումները՝ մեր կուսակցության 15-րդ համագումարը վորոշեց ձեռք առնել այնպիսի միջոցներ, վորոնք ապահովեն մեր յերկրի ինդուստրիալիզացիայի հնարավոր արագ քափը, վորպեսզի մեր յերկիրը պատմական միսիմալ ժամա-

նակաշրջանում ազդարարին-ինդուստրիալ յերկրից դառնա ինդուստրիալ-ազդարարին յերկրի:

Իսկ չափով ե իրագործված մեր հնգամյակում 15-րդ համագումարի կողմից արված և մեր յերկրի հե-ռանկարների համար կենսական նշանակություն ու-նեցող այդ գերեկավար:

Դրված հարցին պատասխանելու համար անհրա-ժեշտ ե պարզել ինչքան կապիտալ ներդրումներ ենք անելու մեր ժողովրդական տնտեսության մեջ առա-ջիկա հնգամյակում, և այդ ներդրումների շնորհիվ ինչ-պիսի փոխհարաբերություն պետք ե ստեղծվի ար-դյունաբերության և գյուղատնտեսության մեջ հնգա-մյակի վերջում:

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԵՋ

(Միլիարդ ռուբլիներով ըստ համապատասխան տարի-ների գների)

	Հնգամյակ 1923/24—1927/28	Հնգամյակ 1928/29—1932/33
Ընդ. ներդրումներ, վորոնց թվում	25,1	63,8
Արդյունաբերութ.	4,2	15,6
Ելեկտրիֆիկացիա	0,9	2,9
Տրանսպորտ	2,7	9,6
Գյուղատնտեսութ.	14,9	23,6

Բերված տախտակը նախ ցույց ե տալիս, վոր առաջիկա հնգամյակում արվելիք կապիտալ ներդրում-ները (63,8 մդ.) յերկու և կես անգամ (254 տոկ.) ավելի յեն, քան անցյալ հնգամյակում: Կապիտալիս-

տական և վոչ մի յերկիր իր հիմնական կապիտալի զարգացման նման թափ չի հայտաբերել պատմու-թյան մեջ:

Այդ 63,8 միլիարդից զուտ արդյունաբերության մեջ արվելիք կապիտալ ներդրումները հասնելու յեն 15,6 միլիարդի, ժողովրդապես չորս անգամ ավելի (400 տոկ.), քան անցյալ հնգամյակում, իսկ յեթե այդ թվի վրա ավելացնենք նաև ելեկտրիֆիկացիայի ներ-դրումները (վորը հանդիսանալու յե ինդուստրիալի-զացիայի եներդետիկ բազան), կստանանք վոչ ժո-ղովրդական տնտեսության մեջ արվելիք կապիտալ ներդրումների գրեթե մի յերրորդը:

Սա քիչ չե, յեթե նկատի ունենանք, վոր «Ժո-ղովրդական տնտեսություն» արտահայտությունն ընդ-գրկում ե, բացի վերը թվածից, և կոմմունալ տնտե-սությունը, և բնակարանային ֆոնդը, և սոցիալ-կուլ-տուրական սեկտորը (ժող. լուսավորություն, առող-ջապահություն, սոց. ապահով. և այլն): Թե ինչպիսի աճում կունենան արդյունաբերական և գյուղատնտե-սության հիմնական ֆոնդերը հնգամյակի ընթացքում, ցույց ե տալիս հետևյալ տախտակը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆ-ԴԵՐԸ ՏԱՐԵՎԵՐՁԻՆ, 1925—26 ԹՎԻ ԱՆՓՈՓՈՆ ԳՆԵՐՈՎ (ՄԻԼ. ՌՈՒԲԼԻՆԵՐ)

Ժող. տնտ. հյուղեր	Արտյուտ թվեր միլ. ռուբլ.		Տոկոս. նում հնգա- մյակի ըն- թացքում
	1927/28 թ.	1932/33 թ.	
1. Արդյունաբերություն	10,481	34,074	230%
2. Գյուղատնտեսություն	28,716	38,029	32,4%

Այսպիսով տեսնում ենք, թե ինչ նշանակալից և գերակշռող աճում են ցուցահանում արդյունաբերական ֆոնդերը՝ գյուղատնտեսական ֆոնդերի հետ համեմատած:

Վերջապես չեթե վերցնենք ժողովրդական յեկամուրը (народный доход) և հաշվենք յուրաքանչյուր տարվա գներով, կտեսնենք, վոր այն ժամանակ, չերբ 1927—28 թվին գյուղատնտեսություն և անասնապահի տնտեսության տված յեկամուրը կազմում և վողջ ժողովրդական յեկամուրի 46,10%, հնգամյակի վերջին այդ յեկամուրի տեսակարար կշիռը հասնում և 39,30%, մինչդեռ արդյունաբերությունը 1927—28 թ. կազմում ևր 31,40%, իսկ հնգամյակի վերջը 34,20%:

Այդ բոլորն ակներև են դարձնում հնգամյակի ինդուստրիալ բնույթը յեվ մեք յեղիքի անցումը ագրարային-ինդուստրիալից դեպի ինդուստրիալ-ագրարայինը:

Հայտնի չե, վոր վորեւ չերկրի ինդուստրիալ բնույթը բնորոշվում և նրանով, թե ինչքան են վարդացած տվյալ չերկրում արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք արտադրում են արտադրության միջոցներ: Յեթե պայմանական կերպով արտադրության միջոցներ արտադրող ճյուղերը (ծանր արդյունաբերությունը) նշանակենք «Ա», իսկ մյուս ճյուղերը՝ «Բ», ըստ ընդհանուր արտադրանքի «Ա» և «Բ», խմբերի զարգացումը հետևյալ պատկերը պետք և ունենա. —

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ
ԸՍՏ 1926—27 թ. ԳՆԵՐԻ

	1927/28 թ.	1932/33 թ.	Աճումը տոկ.
«Ա» խումբ	4,438,6	14,272,5	321,0
«Բ» խումբ	6,385,5	14,708,3	230,0
Ընդամենը	10,824,1	28,980,8	267,7

Պարզորոշ տեսնում ենք, վոր արտադրության միջոցներ արտադրող ճյուղերը, կամ ծանր ինդուստրիան զարգացման ավելի արագ տեմպ և ցուցահանում, քան արդյունաբերության մյուս ճյուղերը — թեթև արդյունաբերությունը:

Ինչ խոսք, վոր արվելիք բոլոր կապիտալ ներդրումների հետևանքով, և գլխավորապես՝ գրեթե 10 անգամ ուժեղացնելով ժողովրդական տնտեսության ելեկտրոնների գետիկ բազան, յուրաքանչյուր բանվորի եներգո-զինվածությունը (энерго-вооруженность) գրեթե կրկնապատկվելու չե, իսկ այդ եներգո-զինվածության մեջ ելեկտրականության կշիռը չնապատկվելու չե: Այս հանգամանքը նույնպես ինդուստրիալիզացիայի արտահայտություններից մեկն և, վորը թերագնահատել չի կարելի, մասնավոր չեթե նկատի առնենք մեր արդյունաբերության արտադրականության անհամեմատ ցածր մակարդակը (վորի պատճառներից մեկն ևլ սեր բանվորի քիչ եներգո-զինվածությունն և) և հնգամյակում նախագծված աշխատանքի արտադրողականության 110-տոկոսային բարձրացումը:

Մեր չերկրի ինդուստրիալիզացիան, վորը վերա-

վախելու չե մեր խորհրդային Միության արտադրական պատկերը, նրա ընդլայնվող, ընդգրկելու չե վոչ միայն քաղաքը, ասենք «գուտ» արդյունաբերությունը: Անվիճելի ճշմարտությունն է, վոր մեր գյուղատնտեսության տեխնիկական մակարդակը ևս չափազանց յետ է մնում ժամանակակից առաջավոր կապիտալիստական յերկրների գյուղատնտեսության մակարդակից: Գյուղատնտեսության տեխնիկական հետամնացության շնորհիվ է նաև, վոր մենք ապրում ենք ներկայիս դժվարությունները: Կոնկրետ պատկերացում տալու համար, թե ինչ չափերի չե հասնում այդ հետամնացությունը, բերենք մի շարք բաղդատական տվյալներ:

Գյուղատնտեսության ասպարիզում յուրաքանչյուր մեկ աշխատողի վրա ընկնում է գյուղատնտեսական ինվենտար*)

Հ. Ա. Միացյալ Նահանգներում 345 ուղբ.

Գերմանիայում 130 »

Սորհրդային Միության մեջ 15 »

Այսպիսով մեզ մոտ յուրաքանչյուր աշխատողին 23 անգամ ավելի քիչ գյուղատնտեսական ինվենտար է հասնում, քան Ամերիկայում:

Յեթե վերցնենք գյուղատնտեսական ինվենտարից տրակտորը, կտեսնենք հետևյալ պատկերը. մեզ մոտ տրակտորների քանակը առ 1-10-28 թ. հասնում է 46,000-ի, մինչդեռ Ամերիկայում 1920 թ. կար

*) Տվյալները վերցրած են ընկ. Ռոզենտալի հոդվածից, տես „Коммунист. Революция“ № 10—11, էջ 72:

246,000 տրակտոր, իսկ 1925 թվին՝ 506,000: Նկատելի է պետք է առնել, վոր ըստ տարածության յերկու յերկրներին ել գրեթե հավասար են, և բացի այդ, մեզ մոտ 25 միլ. տնտեսություն կա, իսկ Հ. Ա. Միացյալ Նահանգներում՝ 6,371,000 տնտեսություն:

Վերջապես, յեթե վերցնենք մի ուրիշ նշանացույց, թե ինչքան քիմիական պարարտանյութեր է կլանում յուրաքանչյուր հեկտարը մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում, ավելի ևս, «անմխիթար» պատկեր կստանանք: 1927—28 թ. մեզանում միջին հաշվով յուրաքանչյուր հեկտար ցանքսին հասնում էր 1,5 կիլոգրամ քիմ. պարարտանյութ, մինչդեռ 1924 թվականին

Իտալիայում հասնում էր	186 կիլոգրամ
Ֆրանսիայում	» 215 »
Գերմանիայում	» 244 »
Անգլիայում	» 276 »
Բելգիայում	» 403 »

Նույնիսկ փոքրիկ Բելգիան 260 անգամ ավելի չե քիմիական պարարտանյութեր հատկացնում յուրաքանչյուր հեկտար ցանքսին, քան մենք: Վորպիսի անուշի հետամնացություն:

✓ Ի՞նչ է նախատեսում հնգամյա պլանը գյուղատնտեսության ինդուստրիալիզացիայի խնդրում: Անցյալ տարի արտադրել ենք ըստ արժեքի 153 միլ. ուղբու գյուղատնտեսական մեքենաներ. ըստ հնգամյակի այդ թիվը պետք է հասցվի 610 միլ., այլ խոսքով՝ մոտակա տարիներս մենք պետք է գրեթե քառապատկենք գյուղատնտեսական մեքենաների արտա-

դրությունը: Նույն անցյալ տարին մենք արտադրել ենք ընդամենը 3000 հատ տրակտոր: Ըստ հնգամյակի նախագծումների հնգամյակի վերջին տարում մենք պետք է տրակտորների տարեկան արտադրանքը հասցնենք 65,000-ի, իսկ չերկրորդ հնգամյակի առաջին տարին՝ 100,000-ի: Տարեկան արտադրել 100,000 հատ տրակտոր—սա մի թիվ է, վորի մասին միայն չերազում եյինք 5—6 տարի առաջ. այս խնդրում կարող ենք ասել, վոր յերազն ել է իրականություն դառնում:

Ըստ հնգամյակի՝ ուժեղ, զրեթե չտեսնված տեմպ է հայտաբերելու նաև մեր քիմիական արդյունաբերությունը, մասնավորապես քիմիական պարարտանյութերի արտադրությունը: 1927—28 թ. այդ արտադրանքը հասնում էր 180,000 տոննի, իսկ հնգամյակի վերջում հասնելու չե 8 միլ. տոննի—աճում՝ զրեթե 4500 տոկ:

Իրոք վոր մեր հնգամյա պլանը մեր ժողովրդական տնտեսության ինդուստրիալիզացիայի տրագ թափի պլանն է:

*
**

Մեր հնգամյակի առանձնահատկությունը նրանում չե միայն, վոր նա ինդուստրիալիզացիայի պլանն է: Յեվրոպական կապիտալիստական յերկրները, ինչպես և Հ. Ա. Միացյալ Նահանգները, թեև անհամեմատ ավելի դանդաղ տեմպով, բայց իրենց զարգացման վորոշ շրջանում նույնպես վեր են ածվել ինդուստրիալ յերկրների: Տարբերությունը մեր և նրանց միջև, բացի տեմպից, կայանում է նրանում, վոր ին-

դուստրիացման պրոցեսը տեղի չե ունեցել և տեղի չե ունենում միանգամայն տարբեր սոցիալ-տնտեսական պայմաններում:

Մեր տնտեսական սխտեմը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցողիկ սխտեմ է, սոցիալիստական տնտեսակարգ կառուցող սխտեմ: Մեր տնտեսական սխտեմի զարգացման ուղին արտադրության յիվ բաշխման համայնացման ուղին է, և այդ պատճառով ել հնգամյա պլանում նախագծված ինդուստրիալիզացիան, վերակառուցումը սոցիալիստական ինդուստրիալիզացիա չե, սոցիալիստական վերակառուցում: Այդ իսկ պատճառով ել մեր հնգամյա պլանը պետք է վերլուծության չենթարկել և այն տեսանկյունից, թե ինչ չափերով են ապահովված համայնացված սեկտորները կամ համայնացված սեկտորների ման պրոցեսները կամ համայնացված սեկտորները, թե ինչ հարգադրացումն առաջիկա հնգամյակում, թե ինչ հարգաբերություն կունենա հնգամյակի վերջում համայնացված սեկտորը (պետական, կոոպերատիվ) մասնավոր սեկտորի հետ՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և բաշխման (ապրանքաշրջանառության) ասպարեզներում:

Հայտնի չե, վոր արդյունաբերության մեջ, մասնավորապես, այսպես կոչված ցենզալին արդյունաբերության մեջ, մասնավոր սեկտորի տեսակարար կշիռը անհամեմատ փոքր է: Յեվ դա հասկանալի չե, վորոշ անհամեմատ փոքր է: Յեվ դա հասկանալի չե, համայնացման ըովհետև կապիտալիզմի զարգացումը՝ համայնացման նախապատրաստել անհամեմատ արդյունաբերության ասպարեզում: Ստորև բերված է արդյունաբերության ասպարեզում սեկտորի տախտակը ցույց է տալիս համայնացված սեկտորի տեսակարար կշիռն եվրոպեյան առաջիկա հնգամյա կում:

59954-66



	Արդյունաբերության համայնացված սեկտորի (պետական և կոոպերատիվ) տեսակարար կշիռը	1927/28 թ.	1932/33 թ.
1	Արդյունաբերության հիմնական ֆոնդերի ասպարիզում	92,2 տոկ.	96,8 տոկ.
2	Ընդհանուր արտադրանքի ասպարիզում . . .	79,5 »	92,4 »
3	Պարձու բանվորների ընդհանուր թվի ասպարիզում	91,4 »	94, »

Հնգամյակի վերջում արդեն իսկ քիչ տեսակարար կշիռ ունեցող մասնավոր սեկտորն ավելի ևս է պակասեցնում ալդ կշիռը, հասցնելով այն զրեթե չնչին տոկոսների: Ինչպես ստացինք, մասնավոր սեկտորն զգալի տոկոս է կազմում վոչ թե ցենզային արդյունաբերության մեջ, այլ մանր-արդյունաբերության ասպարիզում: Այստեղ համայնացված սեկտորի տեսակարար կշիռը 1927—28 թ. կազմում էր 20,7 տոկ., և այդ տոկոսը պետք է հնգամյակի վերջում հասցվի 55.6%: Տեսնում ենք, վոր մանր արդյունաբերության մեջ նույնիսկ հնգամյակի վերջում մասնավոր սեկտորը (վորից խոշոր չափով տնայնագործները) զգալի դեր է խաղալու, մինչդեռ ցենզային արդյունաբերության մեջ մասնավոր սեկտորի տեսակարար կշիռը հնգամյակի վերջում իջնելու յե մեկ տոկոսի:

Այսպիսով արդյունաբերության ասպարիզում տոցիալիստական սեկտորը, համայնացված սեկտորը հնգամյակում շարունակելու յե իր գերակշռող դերքերի ծավալումը:

Ի՞նչ չափերի յե հասնելու համայնացման պրոցեսը գյուղատնտեսության ասպարիզում: Անհրաժեշտ է նախքան դրված հսրցին պատասխանելը կարճ կանգ առնել մեր գյուղատնտեսության զարգացման հետագա ուղիների վրա: Վոր մեր գյուղատնտեսությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ունեցիլ է զգալի նվաճումներ (ցանքսերի ավելացում, տեխնիկական բույսերի տարածման բավական արագ տեմպ, գյուղատնտեսական մեքենաների ներածում, շարքացան, բազմադաշտ սիստեմ և այլն և այլն), դա կարող են բացասել միայն չկաճները և բացարձակ թշնամիները:— Թեև պետք է ասել, վոր նույնիսկ բուրժուական տնտեսագետների վորոշ շերտը նույնպես արձանագրում է մեր գյուղատնտեսության վերելքը:

Սակայն ճշմարտություն է նաև այն, վոր գյուղատնտեսության զարգացման թափը, մասնավորապես վերջին տարիներս և գլխավորապես նրա հացահատիկային սեկտորը, չի կարող բավարարել թե աճող ագրաբնակության պահանջներին և թե արդյունաբերության ու առհասարակ ինդուստրիալիզացիայի վերցված տեմպին:

Վո՞րն է այն գլխավոր պատճառը, վոր պայմանավորում է գյուղատնտեսության զարգացման նման դանդաղ և մեղ չբավարարող թափը: Անկասկած դրա պատճառը մեր գյուղատնտեսության մեջ գերակշռող մանր գյուղացիական տնտեսությունն է, կամ գյուղատնտե-

սուլթան մանրությունն իր հետամնաց, հաճախ պապենական տեխնիկայով: Վերջին տարիներն պատմությունը միանգամայն հաստատեց այն թեզը, վոր մանր տնտեսությունը զարգացման պահանջվելիք սեմպի համար ունի սանձանափակ հնարավորություններ, այն պարզ պատճառով, վոր մանր տնտեսությունն ի վիճակի է ռզտագործելու ժամանակակից թե տեխնիկական (մեքենաներ) և թե գիտական տվյալները (քիմիա, ագրոկուլտուրա): Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության զարգացման արագ քայլեր հրամայական անհրաժեշտություն է դարձնում այդ մանր տնտեսությունների խոցորացումը:

Սակայն ի՞նչ ուղիներով:

Դյուզդատնտեսության մեջ տնտեսությունների խոցորացումը կամ գյուղատնտեսական արտադրության կոնցենտրացիան տեղի է ունեցել և տեղի է ունենում կապիտալիստական հասարակակարգում ևս: Ճիշտ է, հողի մասնավոր սեփականության գոյությունն ազդում է այդ կոնցենտրացիայի խոցորացման թափի վրա, սակայն չի վրձնչացնում կոնցենտրացիայի որոնք: Յեթե Մարքսի ժամանակ, ինչպես նաև հրանից հետո, գտնվում էին տնտեսագետներ, վորոնք բացասում էին գյուղատնտեսության արտադրության կոնցենտրացիան և պաշտպանում էին այն թեզը, վոր գյուղատնտեսությունը զարգանում է իր ուրույն որոնքներով, վոր արդյունաբերության մեջ տեղի ունեցող արտադրության և կապիտալի կոնցենտրացիան և կենտրոնացումը չի կարելի վերագրել նաև գյուղատնտեսությանը, ապա այսօր փաստերը միանգամայն ջրեցին այդ «թեզը»:

Կապիտալիստական կոնցենտրացիան, կամ տրնտեսությունների խոցորացման կապիտալիստական ձևը տեղի է ունենում գյուղի շերտավորման պայմաններում, իհաշիվ մանր, միջակ տնտեսությունների վրա: Նշանցման, իհաշիվ գյուղի մասսաների պրոլետարիատի, սովետականության, իհաշիվ այդ մասսաների արտադրության միջոցներից և հողից զրկման և վերջիններիս կենտրոնացման գյուղի վերին շերտի, կուլակային, կապիտալիստական տարրերի ձեռքում: Սա մի դժվարագին, գյուղի աշխատավորական մասսաների համար չափազանց հիվանդագին և չերկարատև պատմական պրոցես է, վորը տեղի է ունեցել գրեթե բոլոր կապիտալիստական յերկրներում: Սա գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական ուղին է:

Ի՞նչ խոսք, վոր սա մեր ուղին է, ի՞նչ խոսք, վոր մեր իրավակարգը է, վոր պետք է հրահրի նման ուղին:

Մեր ուղին գյուղատնտեսության մանր տրնտեսությունների խոցորացման սոցիալիստական ձևն է, սոցիալիստական յեղանակը: Ինչպես և կայանում նրա բովանդակությունը: Մանր տնտեսությունների խոցորացման պրոցեսը տեղի է ունենում աշխատավորական մասսաների տնտեսական վերելքի ֆոնի վրա: Խոցորացված, իր տեխնիկայով և տնտեսական մակարդակով բարձր համայնացված տնտեսությունը չի հակադրվում մանր անհատական աշխատավորական, չի դառնում նրա թշնամի անտիպոդը: Նրա (խոցորացված տնտեսության) վերելքը և զարգացումը չի պայմանավորվում մանր, անհատական տնտեսության վրձնացումով (բարեկեցության անկման իմաս-

տով), այլ ընդհակառակը, այդ խոշորացված, համայնացված արտադրական պրոցեսսով տնտեսությունը դառնում է ոգնողը մանր անհատական սննեստուրյուններին, սրանց ուրիշակը և սրանց զարգացման ուղին ցույց տվողը:

Այս տեսակետից փոխվում են բանվոր դասակարգի ու գյուղացիական հիմնական մասսաների դաշինքի ձևերը: Պրոլետարիատի ղեկավարող դերն այդ դաշինքում մեր պայմաններում չի կարող սահմանափակվել միայն շրջանառության ասպարեզով: Պրոլետարիատի տրամադրության տակ յեղած ռեսուրսները, գյուղատնտեսության զարգացման ներկա մակարդակն, ինչպես և գյուղացիության հիմնական մասսաների բարեկեցության, նրա վերելքի արագացման անհրաժեշտությունը պահանջ և հնարավորություն են ստեղծում փոխելու գյուղացիության արտադրական պրոցեսսի ձևերը՝ համայնացման ուղիով, կամ սեղծելով նախադրյալներ՝ ամբողջովին համայնացման ձևովին անցվելու:

Ինչ ձևերով կարող է ներգործել և ներգործում է պրոլետարիատը, նրա ղեկատվողական գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի ասպարեզում:

Բերենք կյանքից մի որինակ. Ուկրաինայում կա մի խորհրդային տնտեսություն՝ Շևչենկովի անվան: Այդ խորհրդային տնտեսությունը կազմակերպել է մեքենայական տրակտորական կայան կամ միջգյուղային ենթագետիկ կենտրոն 40—50 հազար հեկտար տարածություն ունեցող գյուղական տնտեսությունների համար, 12—15 կմ. ռադիուսով: Կայանն ունի 225 տրակտոր իր գարնիտուրով, 70 կախիչ, 70 սերմազտիչ

20 տրիերներ, 80 խուրձակապ, 250 հնձող գործիքներ և այլն: Կայանը պոյսմանագիր է կապում սմբողջ շրջանի գյուղացիության հետ և պարտավորվում իր տեխնիկական միջոցների և գյուղացիների աշխատանքի ոգտագործումով կատարել բոլոր դաշտային աշխատանքները: Վերովհետև կայանը միայն է, տեխնիկական բնույթ ունի, գյուղացիների համար վերանում է մեկայլ և կենդանի ինվենտարի անհրաժեշտությունը: Ըստ վորում ամբողջ այդ հողամասը 40—50 հազար հեկտար տարածությամբ դիմազուրկ (обезличивается) և դառնում, և վոչնչացվում են բոլոր միջնակները (межи): Հավաքած բերքը բաժանվում է գյուղացիներին ըստ իրենց հողաբաժինների (надел): Ամբողջ արտադրական պրոցեսսը՝ բացի բաշխումից, համայնացվում է*: Բերած որինակը ցույց է տալիս, թե ինչպես զարգացող ինդուստրիան պրոլետարիատի՝ վորպես կազմակերպչի՝ ձեռքին հանդիսանում է «լծակ» գյուղատնտեսության արտադրության պրոցեսսը համայնացնելու: Նույն ձևերից են նաև կոնսուրակտացիան, տրակտորների կալոննաները, արտադրական կոոպերացիան և այլն:

Մենք ականատես ենք, ինչպես և ակտիվ մասնակցողները և՛ իր ծավալով, և՛ իր տեմպով, և՛ իր նորությամբ պատմության մեջ չտեսնված մի հսկայական պրոցեսսի, թե ինչպես 25 միլ. ցաքուցրիվ մանր տնտեսությունները, թե ինչպես 110—120 միլ. գյուղացիները մտնում են իրենց և՛ տեխնիկական, և՛ սոցիալական վերակառուցման փուլը:

Ստորև բերված տախտակը ցույց է տալիս, թե ինչ չափերի պետք է հասնեն համայնացման պրոցեսսները գյուղատնտեսության մեջ:

*) В. Мотылев. «Ком. Рев». № 10—11, էջ 60—61.

ԳՅՈՒՂԱՏՆՍԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՑՎԱԾ
ՄԵԿՏՈՐԻ ՏՊԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ

Ֆուցանիքներ	Տարի	մասից դոկտորացի	Համայնացված սեկտոր		Դրանց թվում	
				Աճում	Խորհ. անհատ.	Կոր. անհատ.
1. Ցանքերի տարածու-	1927/28	98,0	2,0	100%	1,1	0,9
թյուն	1932/33	82,2	17,8	810 »	3,5	14,3
2. Ընդհանուր արտ.	1927/28	98,2	1,8	100 »	3,2	0,6
	1932/33	82,9	17,1	950 »	3,1	14,0
3. Ապրանքային մաս.	1927/28	95,6	4,4	100 »	3,6	0,8
	1932/33	74,7	25,3	575 »	8,6	16,7

Տախտակը ցույց է տալիս, վոր համայնացված սեկտորը 8 անգամից շատ ավելացնելու յե ցանքերի տարածությունը, մոտ 10 անգամ բարձրացնելու յե իր արտադրանքը՝ համեմատած ընդհանուր արտադրանքի հետ, զրեթե 6 անգամ ավելացնելու յե ապրանքային արտադրանքի իր կշիռը: Բերված տոկոսներն ինքնին հայտաբերում են այն ուժեղ տեմպը, վորով զարգանալու յե համայնացրած սեկտորը:

Իմիջի ալուց այս տարվա (հնգամյակի առաջին տարին) ավելաները գալիս են ապացուցելու, վոր հընգամյակում նախատեսված գույքատնտեսության արտադրությունը համայնացման պրոցեսը վոչ թե չափազանցված է, ալ ընդհակառակը, վոր ռեալ կյանքն իր լրացումները կանի ավելի բարձր տեմպի իմաստով:

Համայնացված սեկտորի տեսակարար կշիռն ավելի է բարձր ե լինելու հացահատիկների ասպարիվում: Ըստ նախագծումների՝ հնգամյակի վերջին տարին, հացի արտադրանքի ապրանքային մասի 42,6% պետք է տան կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները: Վորպիսի գոյեղ միջոց պրոլետարական պետություն ձեռքին՝ կարգավորման յենթարկելու հացի շուկան և սահմանափակելու կուլակային տարրերի ընդդիմադրությունն ու խորթակները:

Բացի այդ, ըստ հնգամյա պլանի, մենք վոչ միայն մոտակա տարիները պետք է լիվիդացիայի յենթարկենք հացի հետ կապված դժվարությունները, ալ պետք է վերականգնենք հացի արտահանությունը, վորը ինդուստրիալիզացիայի և մասնավորապես գյուղատնտեսության ինդուստրիալիզացիայի հզոր ազդակներից մեկը պետք է ծառայի:

Մեզ մնաց լուսաբանել, թե ապրանքաշրջանառության մեջ կամ բաշխման ասպարիզում ինչ նա-

խաղճուսներ կան համայնացման պրոցեսները վերաբերյալ: 1927—28 թ. վողջ առևտրի ասպարիզում համայնացրած սեկտորը կազմում էր 86,1 տոկ., հնգամյակի վերջը այդ տոկոսը պետք է հասնի 96,8-ի, հետևաբար մասնավոր սեկտորի տեսակարար կշիռը հավասարվելու չե 3,2 տոկ.: Հայտնի չե, վոր մասնավոր սեկտորի դիրքերն զգալի չեն մանրածախ (розница) առևտրում: Այս ասպարիզում մասնավոր կապիտալը 1927—28 թ. կազմում էր 25 տոկ.: Հնգամյակի վերջում կազմելու չե 8,9 տոկ. և համապատասխան կերպով՝ համայնացված սեկտորի տեսակարար կշիռը հասնելու չե 91,1 տոկոսի: Սպառողական կոոպերացիան հետևյալ ելույթներն է ունենալու.

1927/28 թ.

1932/33 թ.

Քաղաքներում . . . 45 տոկ.

70 տոկ.

Գյուղերում . . . 19,1 »

40 »

Քաղաքների ազգաբնակչության կոոպերացումը 45 տոկոսից պետք է բարձրանա 75 տոկոսի, իսկ գյուղերինը՝ 19,1 տոկոսից 40 տոկոսի:

Արդյունաբերության, գյուղատնտեսության և բաշխման ասպարիզներում տեղի ունենալիք այդ պրոցեսների հետևանքով վողջ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերից համայնացված սեկտորի բաժինը բարձրանալու չե 52,7 տոկոսից մինչև 68,9 տոկոս և ազգային չեկամուտի 52,7 տոկոսից մինչև 66,3 տոկոս:

Այսպիսով հնգամյակի վերջում համայնացված սեկտորը խիստ գերակշռող դիրք է ունենալու արդյունաբերության յնվ բաշխման ասպարիզում յնվ գգալի, ուժեղ քափով նվաճումներ է ունենալու գյուղատնտեսության ասպարիզում:

Այդ պատճառով էլ մեք հնգամյակը վոյ միայն ինդուստրիալիզացիայի, ժողովրդական տնտեսության վերակառուցման արագ տեմպի պլանն է, այլևս սոցիալիզմի կառուցման կոնկրետ պլան:

Մեր ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակը նշանակալից է վոյ միայն նրանով, վոր հայտնաբերում է սոցիալիստական վերակառուցման անհախճելի թափ (տեմպ), այլ և լուծում է կապիտալիզմի համար արտասովոր թափով և ձևով սոցիալական խնդիրներ: Յեվ դա «զարմանալի» չե, քանի վոր 1917 թվի սոցիալիստական հեղափոխությունը և նրա հետագա զարգացման և ծավալման արտահայտությունը պետք է լինի պրոլետարիատի և գյուղացիության հիմնական մասսաների կոլտուրական և տնտեսական մակարդակի բարձրացումը, ինչպես և քաղաքի և գյուղի կոլտուր-տնտեսական «անհավասարություն» աստիճանական վերացումը:

Ինչպես և ապահովում հնգամյակը աշխատանքով բանվորական ուժի բնական աճումը և գործազուրկների բանակը:

Համաձայն Պետպլանի նախադժուսների, շնորհիվ ազգաբնակչության բնական աճման (վորը, իմիջի ալլոց, $3\frac{1}{2}$ անգամ բարձր է Յեվրոպական յերիլրների իմի վերցրած ազգաբնակչության բնական աճումից) բանվորական հասակ ունեցողների (16 տ.—59 տ.) քանակը, վերածած լրիվ աղամարդու ուժի, կազմելու չե նաև, մոտավորապես միլիոն հոգի, վորից գյուղում 6,8 միլ., իսկ քաղաքում 1,2 միլ.: Յեթե այս թվի վրա ավելացնենք մոտ մեկ միլիոն գործազուրկներ (խոսքը քաղաքի գործազուրկության մասին է), կստանանք մոտ 9 միլիոն հոգի:

Սակայն հայտնի չե, վոր մեզ մոտ գործազուրկու-

Թյան հիմնական արժատները գյուղում են թափանցում: Խնդիրը գյուղական ագրարային գերբնակչության մասին է: Այդ գերբնակչությունը հետևանք է ամբողջ մի դարաշրջանի, այն սոցիալ-տնտեսական պայմանների, վորում ընթացել է Ռուսաստանի գյուղատնտեսության զարգացումը և վորպես ժառանգություն անցել է պրոլետարական դեկատուրային: Ըստ տվյալների ներկայումս ագրարային գերբնակչությունը հավասար է մոտավորապես 8-9 միլիոնի:

Այսպիսով նոր բանվորական ուժի գումարը հավասար է լինելու մոտավորապես 17-18 միլիոն հոգու: Հնարավոր է արդյոք այս պատկանելի բանակի կլանումը և աշխատանքի ապահովումը, կարելի՞ չէ արդյոք ինդուստրիալիզացիայի, գյուղատնտեսության մեխանիզացիայի և աշխատանքի արտադրողականության զուգընթաց աշխատի խոշոր աշխատանքի մասնա ներդրավել արտադրության մեջ:

Սկսենք գյուղից:

Հայտնի չէ, վոր գյուղատնտեսության զարգացման հեռանկարն է նրա խոշորացման, համայնացման պրոցեսները ինտենսիֆիկացիայի և մեքենայացման ուղիներով: Պարզ է նույնպես, վոր մեքենան տոհմասարակ կրճատում է կենդանի ուժը: Այս հիման վրա շատ տնտեսագետներ, իհարկե մեր հակառակորդ բանակից, գտնում են, վոր շնորհիվ մեքենայացման բաղձնիկները վոչ միայն չեն կարող վերջ տալ կամ մեղմացնել ագրարային գերբնակչությունը, վոչ միայն չեն կարող գեթ վորոշ չափով ապահովել գյուղի բանվորական ուժի բնական աճումը, այլ դեռ ավելին, այդ գերբնակչությունը և տոհմասարակ գործազրկությունը գյուղում ավելի ևս տհուլի չափեր պետք է ընդունի մոտ ապագայում:

Այս «պրոգնոզի» մեջ կա միայն մի ճշմարտություն, վոր հնգամյակում գյուղատնտեսական մեքենաները կփոխարինեն մոտավորապես 2,5 միլիոն մարդ: Բայց նույն այդ մեքենայացման շնորհիվ (և առանց վորի անհնարին կլինի) 30 միլիոն հա նոր հողեր պետք է մշակվեն, ցանքսերի 75% սերմացուն պետք է զտվի, պետք է առաջանա և զարգանա գյուղատնտեսական մթերքների նախնական արգյունաբերական վերամշակումը (первичная обработка с.-х. продуктов) և այլն և այլն, իսկ այս բոլորը կկլանեն վոչ միայն վերը բերված 2,5 միլիոն հոգին, այլև լրացուցիչ 9,5 միլիոն հոգի: Այսպիսով վոչ միայն գյուղի բանվորական ուժի բնական աճումը (վորը հավասար է 6,8 միլ. լրիվ աշխատողների) կհերգրավվի, այլ և զգալի չափով, մոտավորապես 2,7 միլիոնով կմեղմացվի ագրարային գերբնակչությունը, հասցնելով այն 5,3 միլիոնի: Այս թիվը էլ քաղաքի պահանջը, վորը հավասար է լինելու մոտավորապես 2,5 միլիոնի, կպակսեցնի շուրջ 2,7 միլիոնի:

Այսպիսով հնգամյակն ապահովելու յե գյուղական սեկտորի բանվորական ուժի բնական աճումը յեվ միաժամանակ զգալի չափով մեղմացնելու յե ագրարային գերբնակչությունը: Յեվ յեթև վերջինս (ագրարային գերբնակչությունը) 1927/28 թվին կաղմում էր գյուղական ազգաբնակչության 13,2 տոկ, ապա հնգամյակի վերջում՝ 3,7 տոկոսը:

Ինչ վերաբերում է քաղաքին, հնգամյակն ապահովելու յե յեվ նոր բանվորական ուժը (լրիվ տղ. ուժի վերածած՝ 1,2 միլ.) յեվ իջեցնելու յե գործազրկությունը մինչև յե միլիոնի:

Այս հետևանքները նույնպես ապացուցներ են սոցիալիստական սխտեմի դերադանցության և սո-

ցիալիստական ռադիոնալիզացիայի միանգամայն տարբեր բնույթի՝ կապիտալիստական ռադիոնալիզացիայի հետ համեմատած: Կապիտալիստական արտադրության զարգացումը, կապիտալիստական ռադիոնալիզացիան տանում և դեպի գործադրության ուժեղացում, բանվորական որվա չեղարացում, մինչդեռ մեղ մոտ՝ տրամագծորեն հակառակը: Հյուսիսային Ամ. Միացյալ Նահանգներում, 1923—1928 թիվը (այսինքն մի հրեզամյակում) արտադրության մեջ յեղած բանվորների քանակը պակասել և 13,9 տոկոսով, մինչդեռ մեղ մոտ առաջիկա հնգամյակում արտադրության մեջ աշխատող բանվորների քանակն ավելանալու չի 34 տոկոսով:

Ինչպիսի հսկայական տարբերություն...

* *

Համաձայն հնգամյա պլանի նախատեսվում է աշխատավարձի նուրիսալ բարձրացում 47 տոկ., վորի մեջ մտնում է 3-4 տոկ. ծերության ապահովագրում, բանվորների յերեխաների թոշակով ապահովում, մեծահասակների լրացուցիչ վերապատրաստում և այլն: Ավելի մեծ աճում է հայտնաբերում աշխատավարձի ռեալ բարձրացումը, վորը հասնելու չի 71 տոկոսի և վորը տեղի չի ունենալու իհաշիվ գների իջեցման, գլխավորապես արդյունաբերական ապրանքների:

Աշխատավարձի նման աճում նույնպես «արտասովոր» է կապիտալիստական յերկրների համար: ալպես, որինալ, ըստ ընկ. Սորոսիլինի տվյալների վերջին հնգամյակում Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներում աշխատավարձը բարձրացել է 2,3 տոկ., Անգլիայում 1922—1927 թվին իջել է 0,3 տոկոսով, նույնը նաև Ֆրանսիայում: Կամ մի այլ համեմատու-

թյուն: Հայտնի չի, վոր նախապատերազմական շրջանում ռուսական բանվորի թե ռեալ և թե նումինալ աշխատավարձը շատ ու շատ յետ յեր միում կապիտալիստական յերկրների բանվորի աշխատավարձից: Յեթե վերցնենք ռեալ աշխատավարձի անգլիական մակարդակը 1905—1909 թ. վորպես 100, Գերմանիայում նա կազմում էր 63,5, Ֆրանսիայում՝ 55,5, իսկ Ռուսաստանում՝ 44: 1928 թ. ռուստոսին Մոսկվայի բանվորի ռեալ աշխատավարձի մակարդակը բարձր էր արդեն Բերլինի բանվորի աշխատավարձից միքանի տոկոսով: Հնգամյակի վերջում արդեն ըստ նախագծումների խորհրդային բանվորի ռեալ աշխատավարձը բարձր պետք է լինի վոչ միայն Բերլինից, այլ և Լոնդոնից և յերկու անգամ բարձր է լինելու 1913 թ. մակարդակից:

Աշխատավարձի բարձրացման նման տեմպ կապիտալիստ. յերկրներից վոմանք հայտնաբերել են 100 տարվա ընթացքում, մինչդեռ խորհրդային յերկիրը՝ հինգ տարվա ընթացքում:

Թե պրոլետարիատի թվական ավելացման և թե աշխատավարձի բարձրացման հետևանքով բացվոր դասակարգի բաժինը ազգային հասույթում (национальный доход) բարձրանալու չի 32,1% տոկոսից մինչև 37 տոկ.:

Այս հանգամանքը նույնպես աննախընթաց է կապիտալիստական յերկրների համար, վորովհետև միանգամայն հակառակն է տեղի ունենում կապիտալիզմի ընթացքում: Ծնորհիվ շահագործման նորմայի հսկայական աճման կապիտալիստական յերկրներում պրոլետարիատի բաժինն ազգային հասույթից քանի գնում համեմատորեն իջնում է, և ընդհակառակը, անհամեմատ աճում է կապիտալիստական վերնախավի բաժինը:

Ռեալ աշխատավարձի բարձրացմանը զուգընթաց

բարեփոխվելու չէ և «առողջանալու» բանվորական բյուջեի ծախսի մասը: Այսպես, որինակ, արդյունաբերական ապրանքների սպառումն աճելու յե 53 տոկոսով, գյուղատնտեսական մթերքներինը՝ 70 տոկոսով, պարզ ապացույց բանվորի սնման բարելավման: Բացի այդ ողու ծախքն զգալի չափով ընկնելու չէ, փոխարինվելով կուլտուրական ծախքերով: Յեվ վերջապես, կրթործրանա բյուջեի փողային կուտակումը, վորը կազմելու յե տարեկան բյուջեի 6 տոկոսը:

Մենք կանգ չենք առնում բանվոր դասակարգի բարեկեցության այլ նշանացույցների վրա (սոց. ապահովագրում, բնակարանային շինարարություն), վորոնք հնգամյակում նույնպես զգալի աճում են ունենալու, ինչպես նաև ամբողջ արդյունաբերության մեջ յոթժամյա բանվորական որը կենսագործելու վրա, վորի հակապական նշանակությունն ակնհայտ է բոլորին: Անցնենք գյուղացիական (խոսքը, Բնուշտ, չքավոր և միջակ գյուղացիության մասին է) բյուջեի քննության: Հնգամյակի ընթացքում յուրաքանչյուր գյուղացիական շնչի հասույթը 1927/28 թվի համեմատությամբ աճելու յե 67 տոկոսով: Բաց վոր նշանակալից է մեզ համար, կոլլեկտիվ տնտեսություններում կազմակերպված գյուղացիական յուրաքանչյուր շնչի հասույթը դեռ ավելի բարձր աճում է հայտնաբերում՝ հասնելով 83 տոկոսի, այսինքն ավելի, քան նույնիսկ բանվորի միջին աշխատավարձը:

Այս չերեւոյթը նույնպես շոշափելի արտահայտություն էր մեր յերկրի վերակառուցման սոցիալիսական բնույթի: Կապիտալիստական յերկրներում խոշոր մկրատ է առաջանում քաղաքի և գյուղի կուլտուրական և կենցաղային պայմաններում, մասնավոր

այն կապիտալիստական յերկրներում, վորոնք զգալի չափերով ժառանգել են ֆեոդալիզմի ֆեոդալիզմը: այդ յերկրների թվին էր պատկանում նաև նախկին ցարական Ռուսաստանը, ուր չքավոր գյուղացու տարեկան հասույթը նույնիսկ չէր հասնում վոյ վորակալ բանվորի բյուջեի 44 տոկոսին: Սոցիալիզմի իսպառ կվերացնի կապիտալիզմից ժառանգված քաղաքի և գյուղի կուլտուր-տնտեսական մակարդակի անհամաչափությունը: Մենք թեւաշույն ենք այդ շրջանը, և մոտակա հնգամյակն ապահովելու յե վորոշ չափով այդ անհամաչափության լիկվիդացիան:

*
*
*

Անժխտելի յե մի դրություն, վոր սոցիալիստական շինարարության հնգամյա պլանի իրականացումը պայմանավորված է այն վորակական ցուցանիշների կենսագործումով, վորոնք նախագծված են հնգամյակում: Իսկ հնգամյակում նախագծված է ինքնարժեքի 35 տոկ. իջեցում, աշխատանքի արտադրողականության 110 տոկ. և բերքատվության 35 տոկ. բարձրացում:

Պարզենք յուրաքանչյուր ցուցանիշի բովանդակ նշանակությունը: Ինքնարժեքի մասին:

Հնգամյակի ընթացքում արդյունաբերության մեջ արվելիք կապիտալ ներդրումները հավասար են լինելու 21,180 միլիոն ռուբլու: Ի՞նչ աղբյուրներից: Այդ գումարի մոտ 70 տոկոսը, կամ 14,774 միլիոն ռուբլին ներքարդյունաբերական կուտակումն է (вну-трипромышленное накопление), վորից՝ 11,013 միլ. ռուբլին գուտ արդյունաբերական շահույթն է, իսկ 3,761 միլիոնը՝ ամորտիզացիան: Անտես առնելով վեր-

ջինս, հարց ե ծագում. ի՞նչ յեղանակով կարող ե առաջանալ արդյունաբերության մեջ այդ 11,013 միլ. շահույթը: Հայտնի չե, վոր շահույթը գոյանում ե ծախու գնի ե ինքնարժեքի տարբերությունից: Վորքան վոր ինքնարժեքը ցած ե, միահավասար պայմաններում բարձր ե շահույթը:

Հնգամյակի ընթացքում ծախու գները պետք ե իջեցվեն 23,9 տոկոսով, իսկ ինքնարժեքը՝ 35 տոկ.։ Յեվ չեթե վերջին պայմանը, այսինքն ինքնարժեքի 35 տոկ. իջեցումը չկենսագործվի, այն դեպքում կապիտալ ներդրումներն արդյունաբերության մեջ հավասար չեն լինի նախագծված 21 միլիարդին (կապիտալ նախատեսված 11 միլիարդը), իսկ այս նշանակում ե, վոր ինդուստրիալիզացիայի թափը կդանդաղեցվի, վորի հետևանքով գյուղատնտեսության թափը նույնպես կդանդաղեցվի, այլ խոսքով՝ վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործը նախատեսված տեմպերով վտանգի կենթարկվի, չեն մեղմանա այն դժվարությունները, վոր ունենք մենք այսօր, ե յետ կմանք կապիտալիստական յերկրների տնտեսական-տեխնիկական մակարդակին հասնելուց ե անցնելուց:

Համաձայն տվյալների, ինքնարժեքի յուրաքանչյուր տոկոսի իջեցում հնգամյակի առաջին շրջանում նշանակում ե 120—130 միլիոն լրացուցիչ կուտակում, իսկ հնգամյակի վերջում՝ 280—290 միլիոն ուրելի:

Ահա թե ինչու ինքնարժեքի իջեցումը պետք ե հանդիսանա տնտեսական ֆրոնտում աշխատողների, բանվոր դասակարգի, նրա ավանդարդի ուշադրության կենտրոնական առանցքը առաջիկա հնգամյակում:

Իսկ յժրբ ե ի՞նչ նախադրյալներից ե կախված

ինքնարժեքի 35 տոկ. իջեցումը: Ձեռնարկումների մի ամբողջ սխառնում (ռացիոնալիզացիա, նոր տեխնիկա, աշխատանքի դիսցիպլինա) կարելի չե հասնել դրան: Տվյալ դեպքում խոշոր ե վճռական նշանակութուն ունի աշխատանքի արտադրողականության 110 տոկ. բարձրացումը: Հնարավոր ե արդյոք արտադրողականության բարձրացման այսպիսի թափ, լուրջ հիմնավորված ե արդյոք այդ նախագծված տեմպը:

Այո, հիմնավորված ե: Նախ՝ արդյունաբերության մեջ աշխատող բանվորների մեխանիկական եներգիան աճում ե 95 տոկոսով, վորը խոշոր ոժանդակող գործոն ե աշխատանքի արտադրողականության բարձրացման ասպարիզում: Յերկրորդ՝ նոր սարքավորումների հետևանքով բարձր կլինի աշխատանքի կազմակերպումը ե 7-ժամյա բանվորական ուրը մոցնելու հետեւանքով՝ խտացված կլինի բանվորական ժամանակը, յերրորդ՝ արդեն ծավալվում ե բանվոր դասակարգի մեջ պայքարը պրոգուների դեմ, վորոնք կասեցնող նշանակութուն ունեն աշխատանքի արտադրողականության բարձրացման նկատմամբ, չորրորդ՝ լավացվելու չե աշխատանքի ապահովությունը, վորի համար իջեցված գներով ծախսվելու չե 320 միլիոն ուրելի, հինգերորդ՝ բարձրանալու չե ռեալ աշխատավարձը, ե անհամեմատ բարելավվելու չե բանվորների սնումը, վեցերորդ՝ բարելավվելու չեն բանվորների բնակարանային պայմանները, յոթերորդ՝ տեղի չե ունենալու բանվորների մասսայական վերապատրաստում, ինչպես նաև նոր կադրերի պատրաստում ե, վերջապես, ութերորդ՝ ծավալվող սոցիալիստական մրցումը, աշխատանքի նոր դիսցիպլինան—ահա այն բոլոր գործոն-

ները, վորոնց իրականացնելով կարելի չե միանգամայն ապահովել աշխատանքի արտադրողականության 110 տոկ, բարձրացումը:

Վերջապես՝ բերքատվության 35 տոկ, բարձրացումից և կախված գյուղատնտեսության արտադրանքի նախագծված աճումը, հացի եքսպորտի վերականգնումը, իսկ սա նշանակում է մեր արդյունաբերության, ինդուստրիալիզացիայի բազայի ուժեղացում:


Ձերականացնել վերը հիշված վորակական ցուցանիշները՝ կնշանակե մեծ հարցական դնել հնգամյակի կենսագործման նկատմամբ, կնշանակե թուլացնել սոցիալիզմի կալույնացման թափը մեր յերկրում:

Ինչ խոսք, վոր ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի իրականացումը կապված է լինելու խոշոր դժվարությունների հետ: Այդ դժվարությունները դեռևս բանվոր դասակարգի վորոշ շերտերում, ինչպես նաև նրա կուսակցության վորոշ օղակներում ծնունդ կտան հուսալքման, տատանումների և նշած գլխավոր գծից թեքումների:

Մեր սոցիալիստական առաջխաղացման ներկա ետապում վտանգավոր են այն տատանումները, այն թեքումը, վորն ուղղված է ինդուստրիալիզացիայի վերցրած թափի դեմ, վորն ուղղված է ժողովրդական տնտեսության համայնացման պրոցեսների արագ տեմպի դեմ: Դրա համար էլ հնգամյակի կենսագործման նախադրյալներին և տնխնա պայքարը աջ, ուղավորող իստական թեքման դեմ:



ԳԻՆԸ 8 ԿՈՊ. Մ. (1¹/₈ ծածկ)



1
1

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

А. Егиазарян

Пятилетка строительства социализма

Госиздат ССР Армении
Эривань—1930

ՀՀ Ազգային գրադարան



NL0193952

32.147